Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեի որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածների պահանջները: Բյուջեի ձևավորման հիմքում ընկած են իրատեսությունը, խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Առավել իրատեսական բյուջե կազմելու համար համայնքի բյուջեի պլանավորումը իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում փաստացի բյուջե մուտքագրված եկամուտների ու ծախսերի շարժը և դրանց վրա ազդող օբյեկտիվ ու սյուբյեկտիվ գործոնները: Բյուջեն պլանավորված է նպաստելու համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, ազգաբնակչության սոցիալական և տնտեսական, ինչպես նաև ձեռնարկատիրական ու արտադրական ոլորտների բարելավմանը:

Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծում եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը կանխատեսվում է՝

- Եկամուտների գծով՝ 2,219,736.600 ՀՀ դրամ, որից՝  
սեփական եկամուտներ՝ 718,466.000 ՀՀ դրամ:
- Ծախսերի գծով՝ 2,219,736.600 ՀՀ դրամ:

#### 1. Բյուջեի եկամուտների կանխատեսում

Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2,219,736.600 ՀՀ դրամ, որից՝

1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները և տուրքերը 2023 թվականի համար բյուջեի նախագծով ծրագրվել են 474,941.430 ՀՀ դրամ, որից՝

ա. Մինչև 2023 թվականի հունվարի 1-ը հաշվարկված հողի հարկի գծով նախատեսվել է 20,000.000 ՀՀ դրամ:

բ. Մինչև 2023 թվականի հունվարի 1-ը հաշվարկված շենքերի և շինությունների գույքահարկի գծով մուտքերը նախատեսվել է 10,000.000 ՀՀ դրամ:

գ. 2023 թվականի համար համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկի գծով մուտքերը նախատեսվել է 100,362.230 ՀՀ դրամ:

դ. Փոխադրամիջոցների գույքահարկի գծով նախատեսվել է 324,498.400 ՀՀ դրամ:

ե. Տեղական տուրքերի գծով համապատասխան թույլտվությունների համար օրենքով սահմանված տուրքերից 2023 թվականի բյուջեի մուտքերը նախատեսվել է 7,780.800 ՀՀ դրամ:

զ. Պետական տուրքերի գծով նախատեսվել է 12,300.000 ՀՀ դրամ, որից նոտարական ծառայության գծով 5,800.000 ՀՀ դրամ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գծով 6,500.000 ՀՀ դրամ:

2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դրոշմազանցներ տրամադրելու սկզբունքով Գավառ համայնքին 2023 թվականի ֆինանսական համահարթեցման դրոշմազանցի գումարը ծրագրվել է՝ 1,487,11.300 ՀՀ դրամ՝ 2022

թվականին նախատեսված 1,359,605.900 ՀՀ դրամի համեմատ աճելով՝ 130,851.200 ՀՀ դրամով, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացման /սուբվենցիաներ՝ ազգային նվազարանների գծով / գումարը կազմում է 9,804.900 ՀՀ դրամ:

3) Այլ եկամուտները 2022 թվականի բյուջեով նախատեսվել են 247,978.970 ՀՀ դրամ՝ այդ թվում.

ա. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ՝ 26,562.000 ՀՀ դրամ:

բ. Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ՝ 6,543.400 ՀՀ դրամ:

գ. Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականության իրավունքով պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ՝ 2,100.000 ՀՀ դրամ:

դ. Այլ գույքի վարձակալությունից մուտքեր՝ 3,255.500 ՀՀ դրամ:

Գույքի վարձակալությունից եկամուտները ծրագրվել են՝ հիմք ընդունելով վարձակալական լուծված և նոր կնքված պայմանագրերը:

ե. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները ծրագրվել են 4,454.400 ՀՀ դրամ:

զ. Տեղական վճարների գծով ցուցանիշները ծրագրվել են հիմք ունենալով ավագանու կողմից սահմանված Գավառ համայնքում տեղական վճարների դրույքաչափերը: Գավառ համայնքում տեղական վճարներ է սահմանվել համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ 67,650.000 ՀՀ դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվողների համար՝ 56,284.500 ՀՀ դրամ, համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝ 62,673.070 ՀՀ դրամ, համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ 2,300.000 ՀՀ դրամ:

է. Ջրմուղ-կոյուղու համար այն բնակավայրերում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում՝ 4,500.000 ՀՀ դրամ /Լանջաղբյուր, Գեղարքունիք և Ծաղկաշեն/:

ը. Համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց՝ 3,390.000 ՀՀ դրամ:

թ. Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 6,000.000 ՀՀ դրամ:

ր. Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ՝ 666.100 ՀՀ դրամ:

թ. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ է նախատեսվում 1,600.000 ՀՀ դրամ:

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտ նախատեսվում է 435,000.000 ՀՀ դրամ՝ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից և Նորատուսում Կարմիր գրքում գրանցված մոդեսների գտնվելու վայրի տարածքների պահպանման ծրագրի իրականացում՝ 5,000.000 ՀՀ դրամ Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով /GAZ կազմակերպություն/:

## 2. Բյուջեի ծախսերի պլանավորում

Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 2,219,736.600 ՀՀ դրամ:

Նախագծով նախատեսված բյուջետային ծախսերում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտի ծախսերը կազմում է 22.6 տոկոս, պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 0.1 տոկոս, տնտեսական հարաբերությունների ոլորտի ծախսերը՝ 2.9 տոկոս, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 9.9 տոկոս, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության ոլորտի ծախսերը՝ 3.1 տոկոս, հանգիստ, մշակույթ և կրոնի ոլորտի ծախսերը՝ 5.7 տոկոս, կրթության ոլորտի ծախսերը՝ 35.3

տոկոս, սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 0.4 տոկոս, համայնքի պահուստային ֆոնդ՝ 20.0 տոկոս:

Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծով ծրագրված ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները.

1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները և խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: Այս ծրագրով նախագծում ծախսերը կազմել են 505,869.800 ՀՀ դրամ: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում աշխատավարձի ֆոնդը կազմում է՝ 324,505.400 ՀՀ դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկն իրականացվել է Գավառ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա, որով նախատեսված է 119.5 հաստիքային միավոր /125 աշխատակից/: Ինչպես նաև համայնքապետարանի բնականոն գործունեությունն ապահովելու համար համայնքապետարանի աշխատակազմի պահպանում ծրագրով նախատեսվել է 90,442.300 դրամ: Վարչական սարքավորումների գծով նախատեսվել է 20,000.000 ՀՀ դրամ՝ աշխատակազմի համար գույք և տեխնիկա ձեռքբերելու: 2022թ. սուբվենցիոն ծրագրով Գավառի համայնքապետարանի շենքի հիմնանորոգման ծախսերի համար ծրագրվել է 63,922.100 ՀՀ դրամ:
2. Ընդհանուր բնույթի ծառայություններ ծրագրով ծախսերը նախատեսվել են 3,830.000 ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է տեղեկատվական ծրագրերի /«E-Community- Համայնքների եկամուտների կառավարման» էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն և SՀՁՎԿ/ և համակարգչային այլ ծառայությունների ձեռք բերման ֆինանսավորումը:
3. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 134,845.000 ՀՀ դրամ, որից 84,600.000 ՀՀ դրամն իր մեջ ներառում է համայնքային գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման, չափագրման, տրանսպորտային ծառայությունների /այդ թվում՝ Նորատուս-Գավառ անվճար երթուղի/, հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման, ներկայացուցչական ծախսերի, տեղեկատվական ծառայությունների ձեռք բերման, Գավառի երիտասարդների տան գործունեության ներդրման, մի շարք հասարակական կազմակերպությունների, Սարուխանի եկեղեցու աջակցման, Գավառի համայնքապետարանում աուդիտի անցկացման ծախսերը, իսկ 2023 թ. համայնքում իրականացվելիք կապիտալ ծրագրերի համար ծախսերը կազմում են 50,245.000 ՀՀ դրամ /Գավառ համայնքի ենթակա հաստատությունների, վարչական շենքերի համար հակահրդեհային վահանակներ, Գավառ քաղաքի և 11 բնակավայրերի համար տոնածառներ/:
4. Պաշտպանություն ծրագրով նախատեսվել է 4,500.000 ՀՀ դրամ՝ ռազմական պաշտպանությանը նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելու, ինչպես նաև տազնապ ազդանշանային համակարգ ձեռքբերելու համար:
5. Գյուղատնտեսության ոլորտում իրականացվելիք աշխատանքները ծրագրվել են 8,100.000 ՀՀ դրամի չափով, որից 7,600.000 ՀՀ դրամ՝ գյուղատնտեսության գծով Գանձակ և Կարմիրգյուղ բնակավայրերի կողմից լիզինգով ձեռքբերված կոմբայնների տարեկան վճար և 500.000 ՀՀ դրամը՝ Գավառ համայնքի խմելու ջրի և հողերի որակի հետազոտման ծախսեր:
6. Ոռոգում ոլորտում ծրագրվել է 2,000.000 ՀՀ դրամ՝ ոռոգման համակարգերի պահպանման նպատակով:
7. Տրանսպորտի ոլորտում ծրագրվել է 292,840.000 ՀՀ դրամ, որից 60,500.000 ՀՀ դրամը նախատեսվել է համայնքի փողոցների փոսային նորոգման, ոչ ասֆալտապատ փողոցների հարթեցման, դաշտամիջյան ճանապարհների ընթացիկ պահպանման և այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերման համար, Գավառ համայնքում ասֆալտապատման աշխատանքների համար սուբվենցիոն ներդրում՝ 151,690.000 ՀՀ դրամ, Գավառի Կաբելագործներ տանող աստիճանների և հարակից տարածքի կապիտալ վերանորոգում՝ 19,000.000 ՀՀ դրամ, Գավառ համայնքում կանգառների տեղադրում՝ 44,550.000 ՀՀ դրամ, Գավառ քաղաքում լուսացույցերի տեղադրում՝ 16,100.000 ՀՀ դրամ և 1,000.000 ՀՀ դրամ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և փորձաքննության համար:
8. Շրջակա միջավայրի պաշտպանություն ոլորտում ծրագրվել է 219,190.000 ՀՀ դրամ, որից աղբահանության և սանիտարական մաքրման ծրագրով նախատեսվել է 196,390.000 ՀՀ դրամ՝ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման, տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար և «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ին աջակցություն, Գավառ համայնքում կանաչապատման, թափառող կենդանիների վնասազերծման



- համար նախատեսվել է 15,000.000 ՀՀ դրամ դրամ, 7,800.000 ՀՀ դրամը՝ Գավառագետի հունի մաքրման համար:
9. Բնակարանային շինարարության համար նախատեսվել է 2,000.000 ՀՀ դրամ բազմաբնակարանային շենքերի նկուղների և ծխատարների մաքրման համար:
  10. Զրամատակարարման ծրագրով նախատեսվել է 16,000.000 ՀՀ դրամ, որից 8000.000 ՀՀ դրամը նախատեսված է արտավայրերում անատուններին ջրով ապահովելու համար, որպես պոմպերի էլեկտրաէներգիայի վճար, իսկ՝ 8,000.000 ՀՀ դրամը Գեղարքունիքի, Լանջաղբյուրի և Ծաղկաշենի խմելու ջրի ջրագծերի պահպանման համար:
  11. Փողոցների լուսավորում ուղրտում ծրագրվել է 125,940.200 ՀՀ դրամ, որից 50,035.000 ՀՀ դրամը՝ արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների համար, իսկ 75,905.200 ՀՀ դրամը Գավառ համայնքի լուսավորության նոր ցանցի կառուցման համար:
  12. Մշակույթի ուղրտում ծրագրվել է 443,903.000 ՀՀ դրամ, որից 125,543.000 ՀՀ դրամը գրադարանների, մշակույթի տների պահպանման, Գանձակի մշակույթի տանը նոր բացվող խմբակների ծախսեր, համայնքային մշակութային միջոցառումների կազմակերպման, «Աղի գուլ» կոչվող տարածքում պեղումներ իրականացնելու, Գավառ համայնքում առկա նստարանների պահպանության համար, իսկ 318,360.000 ՀՀ դրամը Գավառ քաղաքում «Արծրունի եղբայրների արձանախմբի» ձեռքբերման, Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակի շատրվանային համակարգի ձեռքբերման և տեղադրման, Գավառ համայնքում խաղարանների կառուցման, Գանձակի մշակույթի տան գազիֆիկացման, Սարուխանում տարեցների համար խաղարանի կառուցման, Արծվաքարում զոհվածների պուրակի կառուցման, Նորատուում Կարմիր գրքում գրանցված մոդեսների համար նախատեսվող տարածքների պահպանման ծրագրի իրականացման համար:
  13. Նախադպրոցական կրթություն ծրագրով նախատեսվել է 602,163.500 ՀՀ դրամ, որից՝ 434,709.000 ՀՀ դրամը ուղղվում է համայնքում գործող թվով 15 մանկապարտեզների պահպանմանը (սուբսիդիա), իսկ 167,454.500 նախատեսվել է Գավառ համայնքի մանկապարտեզների /Լանջաղբյուրի, Լճափի, Սարուխանի թիվ 1, Գավառի թիվ 7, Նորատուսի թիվ 1/ կապիտալ վերանորոգման, գազիֆիկացման, ջեռուցման համակարգի անցկացման և Բերդկունքում նոր մանկապարտեզի կառուցման համար:
  14. Միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն ծրագրերով նախատեսվել է 8,400.000 ՀՀ դրամ համայնքի սովորող ուսանողների կրթական մակարդակի բարձրացման և սոցիալապես անապահով ուսանողներին աջակցելու համար:
  15. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 341,331.900 ՀՀ դրամ, համայնքում գործող թվով 10 արտադպրոցական հիմնարկների պահպանմանը (սուբսիդիա), Գանձակի երաժշտական դպրոցի գազիֆիկացման, Նորատուսի սպորտային խմբակներին անհրաժեշտ մարզասարքերի և գույքի ձեռքբերման, Նորատուսի արվեստի դպրոցում բացվող նոր բաժնի ծախսերի համար:
  16. Սոցիալական աջակցություն ծրագրով նախատեսվել է 12,000.000 ՀՀ դրամ, սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու համար:

Բաղկացած է 10 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ Գեղարքունիքի մարզի

Գավառ համայնքի ավագանու

----- արտահերթ նիստի թիվ -----

որոշմամբ

Գավառ համայնքի ղեկավար

\_\_\_\_\_ Գ. Ե. Մարտիրոսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարության

աշխատակազմի

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի Գավառի տարածքային

բաժնի կողմից

« » \_\_\_\_\_ 20 թ.

Գրանցման թիվ \_\_\_\_\_

ՀՎՀՀ \_\_\_\_\_

« » \_\_\_\_\_ 20 թ. գրանցված

կանոնադրության թիվ \_\_\_\_\_

Փոփոխությունը գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարության

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

« » \_\_\_\_\_ 20 թ.

«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 3 ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք

2022թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի «Գավառի թիվ 3 մուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցիենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր:
2. Հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքն է, որի իրավահաջորդն է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքը (այսուհետ՝ Հիմնադիր), և որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարը:
3. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):
4. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, ք.Գավառ, Սայադյան փողոց 95:
5. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Հաստատության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի «Գավառի թիվ 3 մուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն. հայերեն կրճատ՝ «Գավառի թիվ 3 մուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ:
7. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:
8. Հաստատությունը կարող է ունենալ պաշտոնական կայք, որտեղ հրապարակվելու են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:
9. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
10. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
11. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

12. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

13. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:
14. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:
15. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
16. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
17. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
18. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալիզացիանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:
19. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝
- 1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.
  - 2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.
  - 3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

- 4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.
  - 5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:
20. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
- 1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.
  - 2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.
  - 3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.
  - 4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.
  - 5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

### 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱԴԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

21. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:
22. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:
23. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:
24. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:
25. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
26. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
27. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

28. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:
29. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
30. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:
31. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝
- 1) մտուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.
  - 2) մտուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.
  - 3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.
  - 4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.
  - 5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:
32. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:
33. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:
34. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:
35. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
36. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

#### 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

37. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝
- 1) նախադպրոցական տարիքի երեխան.
  - 2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).
  - 3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական

մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

38. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:
39. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:
40. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
41. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:
42. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

43. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
44. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
45. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
  - 1) հաստատության հիմնադրումը.
  - 2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող զույքի կազմի հաստատումը.
  - 3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
  - 4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.
  - 5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.
  - 6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
  - 7) հաստատության գործունեության առարկայի եւ նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:
  - 8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
46. Հիմնադիրը՝
  - 1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

47. Հաստատությունում ուսումնասիրատիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

48. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

49. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

50. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

51. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.



- 5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
  - 6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
  - 7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
  - 8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.
  - 9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
  - 10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
  - 11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.
  - 12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.
  - 13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:
52. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:
53. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)
- 1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.
  - 2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.
  - 3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
  - 4) կազմակերպում է հաստատության մեթոդկաթինետի աշխատանքը.
  - 5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորություններին.
  - 6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:
54. Դաստիարակը
- 1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.
  - 2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

- 3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
55. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)`
- 1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.
  - 2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:
56. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)`
- 1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
  - 2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
  - 3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
  - 4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## **6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ**

57. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
58. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:
59. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
60. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
61. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
62. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
63. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
64. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:
65. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից

- 3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
55. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)`
- 1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.
  - 2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:
56. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)`
- 1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
  - 2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
  - 3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
  - 4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

57. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
58. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:
59. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ` բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
60. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
61. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում` միայն դատական կարգով:
62. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
63. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
64. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում` կառավարության որոշմամբ:
65. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության` համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից

ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

66. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:
67. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:
68. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:
69. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:
70. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
71. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
72. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
73. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
  - 1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.
  - 2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
  - 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
74. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

75. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: